

SՀՏ կիրառությունը Հայաստանի դպրոցներում.

որքանո՞վ է SՀՏ-ն դարձել հանրակրթության մաս

Հուսինե Գրիգորյան

Հիմնախնդիրը

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին:

Հայաստանում եւս կրթական գրեթե բոլոր փաստաթղթերում կարելուովում եւ խրախուսվում է SՀՏ կիրառությունը դպրոցներում . ուսումնական պլաններում ամիսը մեկ անգամ նախատեսված են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից, դպրոցներն ունեն համակարգչային սենյակ եւ ինտերնետ կապ, ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում, ներդրվել է էլեկտրոնային գնահատման համակարգ...

Այդուհանդերձ, ուսուցիչների մեծ մասը չի գիտակցում SՀՏ կիրառության անհրաժեշտությունը եւ պարզապես կատարում է ԿԳՆ պահանջները. նրանցից

շատերը համակարգչային հմտությունները զարգացնելը, էլեկտրոնային նյութեր ստեղծելը եւ կիրառելը համարում են լրացուցիչ աշխատանք, որի համար իրենք չեն վճարվում:

Ուսուցիչների ցածր աշխատավարձը լրջագույն խնդիր է, որ ետ է պահում նրանց լրացուցիչ աշխատանքից, նորարարությունից: Մակայն ԵՄ փորձը հուշում է, որ կարելի է կիրառել խրախուսական տարբեր մեթոդներ, որոնք կշահագրգռեն ուսուցիչներին կիրառել SՀՏ:



Առաջին հերթին ուսուցիչը պիտի հասկանա SՀՏ կիրառության առավելությունները եւ զգա, թե որքանով է այն հեշտացնում թե իր՝ ուսուցչի գործը եւ թե աշակերտների՝ առարկան հասկանալու, թեմաներն ընկալելու խնդիրը: Բացի դա՝ անհրաժեշտ են համապատասխան պաշարներ եւ դրանք կիրառելու հմտություններ:

Վերլուծությունը պատասխանում է մեկ հիմնական հարցի՝

որքանո՞վ են տեխնոլոգիաները կիրառվում հանրակրթության մեջ եւ նպաստում կրթության որակի բարձրացմանը:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տվյալներով ՀՀ բոլոր դպրոցներում կան համակարգչային կաբինետներ և բոլոր 1433 դպրոցները միացած են Հայաստանի դպրոցների ինտերնետ ցանցին: Սա ֆիլտրվող ցանց է, որ թույլ չի տալիս երեխաներին վտանգավոր բովանդակության հանդիպել. այստեղ սահմանափակված է նույնիսկ սոց. ցանցերի կիրառությունը՝ մինչև դասերի ավարտը՝ 14:00, նման կայքերը հասանելի չեն դպրոցական ցանցով: Իհարկե, շատ դպրոցներ օգտվում են նաև այլ ինտերնետային կայքերից և շատ օպերատորներ խոստովանում են, որ սոց. ցանցերից օգտվում են նաև առավոտյան:

2012 թ. տվյալներով դպրոցներում միջինում 11.5 համակարգիչ կա. ամենացածր ցուցանիշը Սյունիքում է՝ 7.9, ամենաբարձրը՝ Երեւանում՝ 19.0: Երեխաների թվով, միջինում 23.4 աշակերտին 1 համակարգիչ է հասնում: Եվրամիության երկրներում միջինում 3-7 երեխայի մի համակարգիչ է բաժին հասնում (բարձր դասարաններում աշակերտների թիվն ավելի փոքր է) ըստ 2012



թվականի հարցման արդյունքերի (ԵԽ, 2012):

Մակայն համակարգիչների քանակից բացի կարելու է դրանց տեղաբաշխվածությունը. Հայաստանի դպրոցներում համակարգիչները սովորաբար մի սենյակում են տեղադրված, ինչը սահմանափակում է դրանցից օգտվելու հնարավորությունները:

Շատ երեխաներ են նշում, որ համակարգչային սենյակը հաճախ փակ է, կամ իրենց չեն թույլատրում օգտվել համակարգիչներից, իսկ ուսուցիչներից շատերը ասում են, որ տարբեր առարկաների դասերին ՏՀՏ կիրառելու համար հաճախ ստիպված են լինում տանից համակարգիչ բերել, քանի որ համակարգչային սենյակը զբաղված է, կամ հարմար չէ այնտեղ դաս անել:

Դպրոցի անձնակազմի և ուսուցիչների պատրաստվածությունն ու վերաբերմունքը

Ուսուցիչները 5 տարին մեկ վերապատրաստում են անցնում՝ այդ թվում թարմացնելով համակարգային գիտելիքները: Նման դասընթացների է մասնակցել ուսուցիչների 60%-ը արդեն: Մակայն ԿՏԱԿ-ի հարցումները ցույց են տվել, որ նրանց 20%-ը երբեք չի օգտագործել ՏՀՏ դասավանդման համար, եւս 40%-ը ՏՀՏ կիրառում է ամիսը 1-2 անգամ. ամիսը մեկ անգամ համակարգիչ օգտագործելը ուսումնական պլանով նախատեսված պարտադիր չափորոշիչ է:


Ուսուցիչներին նաեւ պարտադրվում է լրացնել dasar.am-ի էլեկտրոնային

մատյանները, ինչը շատերը համարում են լրացուցիչ չվճարվող աշխատանք:

Ուսուցիչների հատկապես ավագ սերունդը ցանկություն չունի փոխելու դասավանդման մեթոդները, երիտասարդները ավելի հակված են տեխնոլոգիաներն ինտեգրել դասապրոցեսի մեջ, սակայն հմտությունների, պաշարների ու գործիքների պակաս ունեն:

Տնօրեններից շատ բան է կախված: Այն դպրոցներում, որտեղ տնօրենները կարելու են ՏՀՏ-ի դերը, ուսուցիչներն ավելի մեծ ռզեւորությամբ են օգտագործում տեխնոլոգիաներ (օրինակ՝ Միսիթար Մեբաստացի կրթահամալիր): Մակայն կան տնօրեններ, որոնք դեռ հակված են կարծել, թե համակարգիչը առաջին հերթին վնասում է երեխաներին եւ միայն գրքից կարելի է գիտելիք ստանալ:

Կարելու է, որ դպրոցներում կան օժանդակող աշխատակիցներ՝ օպերատորներ: Նրանք պատասխանատու են համակարգչային սենյակի համար, սակայն ըստ էության օպերատորի անելիքը հստակեցված չէ, շատ տեղերում նրանք կատարում են համակարգչի հետ կապված բոլոր գործերը...



Եզրակացություններ և առաջարկություններ

Հիմնական խնդիրները ուսուցիչների թերի պատրաստվածությունն ու շահագրգռության և ոգևորության պակասն է. նրանք չգիտեն, թե ինչպես կիրառել համակարգիչը կամ այլ մեդիա գործիքները կրթության մեջ և շահագրգռված չեն դա սովորելու: Պատասխանելով ուսումնասիրության հիմնական հարցին՝ որքանո՞վ են տեխնոլոգիաները կիրառվում հանրակրթության մեջ և նպաստում կրթության որակի բարձրացմանը, պետք է փաստել, որ *SZS-ն կիրառվում է հազվադեպ, այն էլ հիմնականում պարտադրված ուսումնական պլանով, և դա չի նպաստում կրթության որակի բարձրացմանը:*

Գործնական առաջարկություններ

1. Կրթության մեջ SZS կիրառության հայեցակարգի մշակում համապետական մակարդակով. այս փաստաթուղթը կամփոփի նպատակները և դրանց հասնելու մեխանիզմները, ինչպես նաև անելիքների ժամանակացույցը:
2. Գրավոր մշակված հայեցակարգ դպրոցների մակարդակով. յուրաքանչյուր դպրոցի ղեկավարություն՝ դպրոցի ինքնավար մարմինների հետ համատեղ մշակում է SZS ինտեգրման հայեցակարգ ու գործողությունների ծրագիր:

3. Ուսուցիչների փորձի փոխանակման ժամեր դպրոցներում. արագ փոփոխվող այս տեխնոլոգիական ժամանակաշրջանում 5 մեկ անցկացվող վերապատրաստումները չեն կարող բավարար լինել: Պետությունը պիտի խրախուսի ուսուցիչներին ինքնակրթվել՝ գործընկերների հետ քննարկել SZS օգտագործման փորձը, սովորել միմյանցից, ուսումնասիրել ու ներկայացնել միջազգային փորձը:
4. Մանկավարժական բուհերում կրթության մեջ SZS կիրառելու թեմայով դասընթացի ներմուծում. գործող ուսուցիչներին վերապատրաստելուն զուգահեռ, անհրաժեշտ է մանկավարժական բուհերի ուսանողներին սովորեցնել կրթության մեջ SZS կիրառության մեթոդները, գործիքներն ու պաշարները:
5. Խրախուսական մեթոդների կիրառում. օգտվելով ԵՄ-ի փորձից՝ պետք է լավագույն ուսուցիչներին ոգևորել նոր տեխնիկա, լրացուցիչ վերապատրաստում, միջազգային գիտաժողովների կամ մասնագիտական շրջայցերի մասնակցություն առաջարկելով:
6. Մրցույթներ, փառատոններ. SZS կիրառությամբ դասերի պլանների, կրթական մուլտիմեդիա նյութերի, նախագծերի, վիրտուալ գործիքների

մրցույթները եւս կխթանեն դպրոցների
ավելի ակտիվ աշխատանքին:

7. Համակարգիչների վերաբաշխում.
բացի համակարգչային սենյակից
անհրաժեշտ է համակարգիչներով եւ/
կամ էկրաններով զինել
գրադարանները, դասասենյակները,
լաբորատորիաները, այնպես որ,
դրանք դառնան բոլոր առարկաների
անբաժան մասը:

8. Նոր պաշարներ եւ կրթական ծրագրեր.
ուսուցիչները չեն տիրապետում
հետաքրքիր մուլտիմեդիա նյութերի,
որոնք կարող են օգտագործել դասերի
ժամանակ: Նախարարության
տրամադրած ուսումնական
սկավառակներն արդեն հին են, ավելի
ժամանակակից, ինտերակտիվ,
խաղային նյութեր են անհրաժեշտ,
վիրտուալ փորձեր ու շրջապտույտներ:

9. Էլեկտրոնային հաղորդակցություն.
առաջարկում ենք ներդպրոցական եւ
արտադպրոցական
հաղորդակցությունը պարտադիր
կերպով դարձնել էլեկտրոնային: